ԱՐԴԱՐԱՑԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՐՋ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ և ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
- **MODEL POLICY REGARDING CRIMINAL INVESTIGATION AND PROSECUTION OF CIVIL AVIATION ACCIDENTS AND SERIOUS INCIDENTS**

ՆՊԱՏԱԿԸ

Սույն Քաղաքականության նպատակն է ապահովել ուղեցույցեր՝ քրեական հետաքննությունների և հնարավոր քրեական հանցագործությունների դատական գործընթացի հետ կապված, որոնց վարման անհրաժեշտությունը առաջացել է քաղաքացիական ավիացիայի պատահարների կամ լուրջ միջադեպերի մասին արդարադատության մարմիններին իրազեկման արդյունքում:

Այդ ուղեցույցերը/ուղղորդումները երաշխավորված են այն հանգամանքով, որ թռիչքների անվտանգությունն առաջնային է ավիացիայի համար և թռիչքների անվտանգության պահպանումը գերակա հանրային շահն է:

Ավիացիոն պատահարներից կամ լուրջ միջադեպերից հետո դատական գործընթացի պատշաճ ապահովումը շատ կարևոր է արդարադատության և թռիչքների անվտանգության պահանջների հավասարակշռության ձեռք բերման համար:

Սույն քաղաքականությունը մշակվել է ավիացիոն ոլորտը կանոնակարգող միջազգային կազմակերպությունների (ԻԿԱՕ, Եվրոպական Հաձնաժողով, Եվրոկոնտրոլ) կողմից առաջարկվող մոդելային քաղաքականության հիմնական դրույթների հիման վրա:

Վերը նշվածը պաշտոնապես ճանաչված և սահմանված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում՝

- ԻԿԱՕ-ի 13-րդ հավելվածում, որը վերաբերվում է պատահարների և լուրջ միջադեպերի հետաքննությանը (մասնավորապես Ե հավելվածը, որն ապահովում է իրավաբանական ուղեցույցեր),
- Եվրոկոնտրոլի ESARR 2-ի դրույթներում,
- Եվրոպական Միության 996/2010թ կանոնակարգում և Եվրոպական հանձնաժողովի 2003/42 հրահանգում, ինչպես նաև ազգային ավիացիոն օրենսդրությամբ սահմանված համապատասխան դրույթներում:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Այս քաղաքականությունը կիրառվում է քրեական հանցանքների հետաքննությունների և հետապնդումների դեպքում, որոնց անհրաժեշտությունն առաջացել է քաղաքացիական ավիացիայի պատահարների կամ լուրջ միջադեպերի մասին զեկույցների ներկայացման պարտադիր կամ կամավոր համակարգերի աշխատանքի արդյունքում:

Պատահարի կամ լուրջ միջադեպի դեպքում, ԻԿԱՕ-ի 13 հավելվածի և ՀՀ կառավարության 05.02.2004թ 1777-Ն որոշմամբ հաստատված <<Ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգի>> դրույթներին համաձայն, արդարադատության մարմնի ներկայացուցիչները (ոստիկանները, քննիչները, դատախազները) համագործակցում են քննությունը իրականացնող հանձնաժողովի հետ համակարգելու իրենց դիրքերն ու առաջնահերթությունները:

Պատահարի և/կամ լուրջ միջադեպի մասին զեկույցի միջոցով տեղյակ լինելուց հետո, արդարադատության համակարգի ներկայացուցիչները պետք է կապ հաստատեն թռիչքների անվտանգության ազգային համապատասխան մարմնի հետ, ինչպես օրինակ՝ մասնագիտական հետաքննչական հանձնաժողովի կամ քաղաքացիական ավիացիայի լիազոր մարմնի հետ, ինչպես նաև կարող են դիմել աէրոնավիգացիոն ծառայություններ մատուցող կազմակերպությունների թռիչքների անվտանգության ղեկավարներին, ավիաընկերությունների կամ օդանավակայանի ղեկավար մարմիններին, որպեսզի փոխանակեն անհրաժեշտ տեղեկատվություն, քննարկեն ապացույցների օգտագործման և հնարավոր համագործակցության հարցերը:

Նշված համագործակցությունը հարկավոր է իրականացնել հարգելով և ճանաչելով յուրաքանչյուր անձի պատասխանատվություններն ու անկախությունը, ինչպես նաև սահմանված համապատասխան օրենքներն ու ոլորտը կանոնակարգող միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող լավագույն գործելաոճն ու փորձը:

Այս ամենի նպատակն է ապահովել արդյունավետ հետաքննություն և որոշումների կայացման գործընթացներ՝ պահպանելու և բարելավելու հանրային անվտանգությունը, ինչպես նաև արդարադատության իրականացումը:

Փաստ/Ապացույց

Զեկույց/Հաշվետվություն

Միջադեպի մասին զեկույցը, որը ներկայացվել է զեկույցների ներկայացման պարտադիր կամ կամավոր համակարգի շրջանակներում, չի կարող օգտագործվել որպես ապացույց քրեական վարույթում զեկույցը ներկայացրած անձի դեմ:

ICAO-ի Հավելված 13-ի և Եվրամիության թիվ 996/2010 կանոնակարգի ներքո, հետաքննող մարմինների կամ անձանց կողմից կատարված վթարների և լուրջ միջադեպերի մասին հաշվետվությունները չեն կարող օգտագործվել անհատների դեմ քրեական վարույթում:

Վկայի հայտարարությունը

Անվտանգության հետաքննության համատեքստում ստացված վկայի հայտարարությունը չի կարող օգտագործվել որպես ապացույց քրեական վարույթում այդ հայտարարությունը կատարած անձի նկատմամբ:

Դատական հետապնդում

Դատական հետապնդումներ չպետք է իրականացվեն անհատների/ֆիզիկական անձանց նկատմամբ այնպիսի գործողությունների, բացթողումների կամ որոշումների (ըմբռնելի սխալների) համար, որոնք արտացոլում են նույն հանգամանքներում ողջամիտ անձի վարքագիծ, նույնիսկ եթե այդ գործողությունները, բացթողումները կամ որոշումները կարող էին հանգեցնել օրենքի չկանխամտածված կամ ոչ դիտավորյալ խախտմանը:

Այս քաղաքականության մեջ ոչինչ չպետք է խոչընդոտի քրեական հետապնդման իրականացմանը կանխամտածված սխալ գործողությունների կամ ծայրահեղ անփույթ վարքագծի[1] դրսեվորման դեպքերում:

Փորձագիտական աջակցություն

Արդարադատություն իրականացնող մարմնի մասնագետները (դատախազները) պետք է օգտվեն ավիացիոն բնագավառի անհրաժեշտ փորձագիտական աջակցությունից:

[1]Անփութության մասին հիշատակված է Եվրոպական Հանձնաժողովի (EC) մի շարք փաստաթղթերում, սակայն Եվրոպայում այդ երևույթի համընդհանուր համաձայնեցված սահմանում չկա: Կարծես թե կա մի համընդհանուր համաձայնություն, որ անփութությունը/անզգուշությունը լրջության աստիճան է, ակնհայտ ռիսկի լուրջ անտեսում և որոշակի հանգամանքներում ակնհայտորեն պահանջվող ուշադրության լիակատար ձախողում: Թեև մի շարք պետություններ նմանեցնում են կոպիտ անզգուշությունը և կանխամտածված վնաս հասցնելը, սակայն դրանք միշտ չէ որ նույնն են: Հետևաբար, կանխամտածված սխալներ գործելու վարքը դատական հետապնդման ենթակա գործերի ցուցակի մեջ մտցնելու առաջարկը միանշանակ պետք է դառնա յուրաքանչյուր պետության հարցը մոդելային քաղաքականությունն իրականացնելիս հղում անելու կամ չանելու կանխամտածված սխալներ գործելու վարքի վրա՝ հաշվի առնելով ազգային օրենսդրության շրջանակները: